

Հարգելի Անուշ Էվոյան

Ստորև ներկայացնում ենք Ձեր 11.03.2016թ. հարցման պատասխանը.

**1. Հարց**

*Կատարվո՞ւմ է արդյոք «Թեղուտ» ՓԲԸ կողմից Շնող գետի ջրերի մոնիտորինգ:*

**Պատասխան**

Շնող գետի ջրի մոնիտորինգը «Թեղուտ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) պատվերով իրականացնում է «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերության շրջակա միջավայրի պահպանության և աբորատորիան: Նմուշառում իրականացվում է գետի երկայնքով երեք տարբեր վայրերից: Չափվում են ջրի բաղադրության հետևյալ ցուցանիշները՝ pH, մետաղներ (As, Cu, Zn, Pb, Mn, Fe և այլն), սուլֆատ, քլոր, կարբոնատ իոններ, կախված մասնիկներ, հիմնայնություն, էլեկտրահաղորդականություն և այլն.ընդհանուր առմամբ՝ շուրջ 26 ցուցանիշ: 2015թ. կենսաբազմազանության մոնիտորինգային ծրագրի շրջանակներում կատարվել է նաև Շնող գետի հիդրոկենսաբանական մոնիտորինգ:

**2. Հարց**

*Ինչպե՞ս է գործում «Թեղուտ» ՓԲԸ հարստացուցիչ ֆաբրիկայի շրջանառու ջրի համակարգը:*

**Պատասխան**

Թեղուտի և Լեռնահանքային համալիրում արտադրական ջրի շրջանառության համակարգը պարզեցված կարելի է նկարագրել հետևյալ կերպ. ֆաբրիկայում հանքաքարի վերամշակման գործընթացում օգտագործված ջուրն ինքնահոս արչատարով արչանքի հետ միասին տրվում է արչամբար, որտեղ պարզեցվելուց հետո կոլեկտորով անցնում է երկրորդային պարզեցման ավազան: Երկրորդային պարզեցման ավազանի հարևանությամբ կառուցված պոմպակայանի միջոցով ջուրը նորից մղվում է ֆաբրիկա: Պոչամբարի և այլ մակերևույթներից բնական գոլորշացման հետևանքով պակասում է շրջանառվող ջրի միջև 30%-ը: Պահանջվող քանակը համալրվում է Դեբեդ գետի ափին գտնվող պոմպակայանով:

**3. Հարց**

*Ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել «Թեղուտ» ՓԲԸ կողմից, որպեսզի վթարը վերացվի:*

**Պատասխան**

Վթար, որպես այդպիսին, տեղի չի ունեցել: 2016թ. փետրվարի որոշ օրերի, տեղումների քանակով և արագ ձնհալով պայմանավորված, արչանքային տնտեսության երկրորդային պարզեցման ավազանում կուտակվել է ավելի մեծ քանակի պարզեցված ջուր, քան տվյալ պահին կարող էր արտադրական գործընթաց վերադարձնել շրջանառու պոմպակայանը, և տեղի է ունեցել դրա որոշակի մասի արտահոսք Շնող գետի հառատանոց վտակ: Արտահոսքը եղել է պահային, ոչ տևական: Արտադրական ջրի շրջանառու համակարգը գործել և գործում է անվթար: Հետագայում նման արտահոսքերը շրջակա միջավայր բացառելու նպատակով Ընկերությունը հարստացուցիչ ֆաբրիկայի շրջանառու ջրի պոմպակայանը համալրել է ևրացուցիչ հզորություններով, որոնք գործարկվել են 2016թ. մարտի սկզբին:

#### **4. Հարց**

Խնդրում եմ տրամադրել պոչամբարից դուրս եկող հոսքաքրերի և նստվածքների քիմիական կազմի մասին և Լաբորատոր հետազոտությունները:

#### **Պատասխան**

Պոչամբարից դուրս եկող հոսքաքրեր և նստվածքներ չկան:  
Երկրորդային պարզեցման ավազանում, որտեղից պահային արտահոսք է տեղի ունեցել, կուտակվող ջրի բաղադրությունը կախված է մի շարք գործոններից, այդ թվում՝ տեղումների քանակից: Անմիջապես արտահոսքի պահին ավազանի ջրի նմուշ առնում և Լաբորատոր հետազոտություն չի իրականացվել: Արտադրական գործընթացում օգտագործվող ռեագենտների աննշան հետքերից բացի՝ այդ ջուրը, որպես կանոն, պարունակում է կրի որոշակի քանակություն:

Հարգանքով՝

Վահրամ Ավագյան

Մամուլի խոսնակ

«Վալլեքս» խմբի ընկերություններ